«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Հայոց լեզվի և գրականության ամբիոն

Քննական հարցարան

11-րդ դասարան

Հայոց լեզու

1. **Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողնված տառերը և կետադրել:**

Ծովն ահեղ-րեն մռնչում էր սպառնում ալիքի մի **գիր-** հարվածով խորտակել նավը: Գիրկ-նդխառն ալիքները որոտ-նդոստ փշրվում էին հանդիպակա- սարի կոր-նթարդ փեշերին: Նավաստիները որ բազում **խոչ-նդոտներ** էին հաղթահարել այդ գիշեր ան-մբռնելի **երկյուղով** էին համակված: Բանն այն էր որ նավն անհյուր-նկալ ափերին մոտեցնել հնարավոր չէր կբախվեր ծով-գրյա ժայռերին: Մինչ նավապետը կհրամայեր շարժիչն անջատել նավը բախվելով սրածայր խութերին ճե-քվեց: Անակ-նկալ բախումը խուճապ առաջացրեց ան-գնական նավաստիների շրջանում: Տախտակամա-ի վրա անասելի հրմշտու- սկսվեց: Այլ-ևտրանք չկար հարկավոր էր շտապ լքել խորտակվող նավը:

Եթե պարանի ծայրն այս խութերին կապեինք և մեզնից մեկը մյուս ծայրը ափ հասցներ ու ամրացներ ապա դրանից բռնելով կկարողանայինք ցամաք հասնել ազատվելով լայնար-ակ օվկ-անոսում անհետ կորչելու ճակատագրից: Բայց ով **կհամար-ակվեր** այդ անել հար-րեց նավապետը:

Առաջ եկավ մի երիտասարդ նավաստի **պար-նահասակ** լայնաթիկունք հաստաբազուկ աչքերի յուր-րինակ փայլով և պարանը կապելով մեջքին ան-ընկյուղ նետվեց հետզհետ-ալեկոծվող ալիքների մեջ: Բոլորի խու-ապն ու վախը մի ակ-նթարթում հ-դս ցնդեցին: Միլ-ոնավոր աչքեր բար-ացակամորեն **ան-ղոք** տարերքի դեմ կռվող երիտասարդին էին հետևում: Մեծ դժվարությամբ երիտասարդն ի վերջո ափ հասցրեց ճոպանը ու կապեց հաստաբուն ծառին: Շնորհիվ խիզախ երիտասարդի ան-նկճելի կամքի և անձնազոհության նավի անձնակազմը փրկվեց: Ոչ ոք երբև- չմոռացավ նրա ան-րինակ սխրանքը:

(Տեքստը որոշակի փոփոխություններով ընտրված է Թելադրության նյութերի ժողովածուից)

2. Ընդգծված բառերին գրել երկուական հոմանիշ:

_____

_____

_____
_____
_____

3. Արտահայտել մեկ բառով :

- հոդս ցնդել-
- աչքերը խոնարհած-
- ոտքի վրա կանգնած-
- հեշտ ընկալվող, հասկացվող-
- կուչ գալ
- ոսկու շերտով պատված
- արու ձի
- զանգվածային կոտորած

4. Բացատրել տրված համանունների իմաստները, կազմել մեկական նախադասություն՝ բարակ, անապատ:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

5.Տեքստում ընդգծված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության:

_____
_____
_____
_____
_____
_____

6. Գրել շարադրություն՝ ընտրելով հետևյալ թեմաներից մեկը:

- Եթե ես կարողանայի…
- Ամենաօգտակար խորհուրդը…